Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 31.08.2022թ. չորեքշաբթի թիվ 33-34 (1058-1059)

Ամառն անցավ

Մայիսը հաղթանակների ամիս է, սեպտեմբերը՝ աշխատանքի:
Ամառն անցավ:
Վաղը **սեպտեմբերի 1**-ն է:

Քրիստոսի ծննդից առաջ՝ **2492** թվականին, բուն հայոց տոմարով՝ **1 թվականի Նավասարդի 1**-ին, հուլյան տոմարով՝ **օգոստոսի 11**-ին, մենք զատվեցինք համաշխարհային խառնամբոխից: Պատճառը **Բաբելոնի** աշտարակաշինությունն էր, առիթը՝ **Բելի** գոռոզությունը: Աշխարհն ապստամբեց **Աստծո** դեմ, մենք հեռացանք աշխարհից՝ **ընդմիշտ մնալով Աստծո հետ**: Մեր անվանադիր նախնին՝ **Աղեղնավոր Հայկը**, չհանդուրժեց արքնացող այլասեր ոգին, մերժեց ծեւավորվող կռապաշտ **նյութասիրությունը**, որ դարձավ բիրտ ուժի տիրապետության հաստատման շաղախը եւ մնաց դրա սնամեջ գաղափարաբանության միակ էությունը: Ազատասեր Հայկը **նետահարեց** Բելին եւ առհավետ պատգամեց իր հետնորդներին՝ կյանքից առավել սիրել **ազատությունը**, երկրի փոշին ստորադասել **երկնքի վեհությանը**, պաշտել **լույսը**, **միտքը**, **գաղափարը**, ունենալ **Հայրենիք**...

Ու սկսվեց **հայոց ազգային-ազատագրական պայքարը**, որ թվում է՝ վերջ չունի ժամանակների մեջ, քանի դեռ չի հաղթանակել **բարին** ու չի հաստատվել **Աստծո արքայությունը** նաեւ երկրի վրա:

32 տարի առաջ՝ 1990 թվականի **օգոստոսի 23**-ին, հուլյան հին տոմարով՝ **օգոստոսի 11**-ին, բուն հայոց տոմարով՝ 4482 թ. **Նավասարդի 1**-ին, ինչպես հազարամյակներ առաջ մեր քաջ նախնին՝ Հայկը, մենք էլ գերադասեցինք ազատությունը եւ շարունակված ազգային-ազատագրական պայքարի հաղթական նոր շրջադարձը հրապարակեցինք **Անկախության հռչակագրով**. կրկին շրջանառության մեջ մտավ **Հայաստանի Հանրապետություն**՝ յուրաքանչյուր հայի համար ամենաթանկ բառեզրը՝ իբրեւ **անկախ** եւ **ինքնիշխան** երկրի իրողություն, որ վավերացվեց **1991թ. սեպտեմբերի 21-ի՝ Անկախության հանրաքվեի** փայլուն արդյունքով:

Կա քարերը հավաքելու ժամանակը, **կա քարերը նետելու ժամանակը**: Երբ գալիս է *քարերը նետելու ժամանակը*, եւ մենք հավաքած քարեր չենք ունենում, ոչ միայն կորցնում ենք ճակատագրի ընձեռած պատեհ առիթը, այլեւ մնում ոսոխի նետած քարերին դեմ-հանդիման՝ ստիպված ապավինելով օտարի վահանին: Ու երբ անցնում է *քարերը նետելու ժամանակը*, ու գալիս է *քարերը հավաքելու ժամանակը*, քարերը հավաքելու փոխարեն մեր կեսը մտածում է քարերը նետելու եղանակների մասին ու մտովի նետում այն քարերը, որ դեռ չենք հավաքել... Ու այսպես անցնում է ժամանակը, ու մեր շերեփը մնում է թղթե, որովհետեւ քարերը հավաքելու փոխարեն մեր մյուս կեսը մտածում է օտար վահանների ու դրանց ամրության մասին...

Ամառն անցավ:
Մայիսը հաղթանակների ամիս է, սեպտեմբերը՝ աշխատանքի:
Բարով է գալիս սեպտեմբերը՝ աշնան, բերք ու բարիքի, առատության, նոր գործի, նոր մեկնարկի խորհրդանիշ ամիսը:
Եկել է **աշխատելու** ժամանակը:
Աշխատենք:

Հավաքենք ամեն մեկս **մեր բաժին քարը**, որ երբ շուտով մոտենա *քարերը նետելու ժամանակը*, այլեւս չապավինենք օտարի վահանին, մեր շերեփը արդեն լինի պողպատյա, ու ճակատագրի ընձեռած պատեհ առիթը դարձնենք **հաղթական**: **Ամբողջական**: **Վերջնական**: Չէ՞ որ **Մենք** արդեն շրջել ենք պատմության անիվը եւ աննահանջ վերադառնալու ենք դեպի **Մեզ**:

Ավարտական

Ապագայի երաշխավորը

«Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում տեղի է ունեցել ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի 2021-2022 ուսումնական տարվա շուրջ 500 շրջանավարտների ավարտական հանդիսավոր արարողությունը:

Հանդիսավոր արարողությանը մասնակցել եւ շրջանավարտներին ողջունել են ՀՀ փոխվարչապետ **Համբարձում Մաթեւոսյանը,** ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը,** ՏԿԵ նախարար **Գնել Սանոսյանը,** Քաղաքաշինության կոմիտեի նախագահ **Արմեն Ղուլարյանը,** ով նաեւ համալսարանի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը,** ՃՇՀԱՀ ռեկտոր **Եղիազար Վարդանյանը,** պետական այրեր, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ եւ այլք:

շարունակությունը՝ էջ 3

Օգոստոսյան

Հասանելի կրթական ծառայություններ

Օգոստոսյան խորհրդակցությունների շրջանակում հերթական քննարկումը տեղի է ունեցել Սյունիքի մարզում, որը վարել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:**

Խորհրդակցությանը մասնակցել են Սյունիքի մարզպետի տեղակալ **Հայկ Հարությունյանը,** ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը,** ԿՁՆԱԿ տնօրենի պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը,** ԿՏԱԿ տնօրեն **Արտակ Պողոսյանը,** մարզպետարանի Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ **Մերի Գանդալյանը,** Սյունիքի մարզի հանրակրթական եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններ, մարզպետարանի, նախարարության, համայնքապետարանների պատասխանատուներ:

շարունակությունը՝ էջ 2

Մարզական

Կառավարությունը պատրաստ է նպաստել

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է Հայաստանի սպորտային մարմնամարզության հավաքականի անդամներին, շնորհավորել նրանց Մյունխենում անցկացված Եվրոպայի առաջնությունում գրանցած բարձր արդյունքների համար եւ խրախուսել շնորհակալագրերով ու հուշանվերներով:

Հանդիպմանը, բացի մեդալակիր մարզիկներից, ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիայի նախագահ **Գագիկ Վանոյանը,** հավաքականի գլխավոր մարզիչ **Հակոբ Սերոբյանը,** մարզիչներ **Հայկ Նազարյանն** ու **Սամվել Գալստյանը:**

շարունակությունը՝ էջ 3

Սերունդ

Հաստատվել են ուսումնական պլանները

ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցների 2022-2023 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:

Սահմանվել է, որ վերոնշյալ դպրոցներում ուսումնական տարին մեկնարկում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված ժամկետներին համապատասխան: Նույնը վերաբերում է նաեւ աշնանային, ձմեռային եւ գարնանային արձակուրդներին:

Համաձայն օրինակելի պլանների՝ ուսումնական տարվա տեւողությունը 34-40 շաբաթ է: Մասնագիտական առանձնահատկություններով եւ շենքային պայմաններով պայմանավորված՝ կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ: Առարկաների եւ դասաժամերի քանակն ուսումնական պլանում կարող է ընդլայնվել՝ կախված դպրոցի ֆինանսական հնարավորություններից:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձեւերն են անհատական եւ խմբային պարապմունքները: Անհատական դասի տեւողությունը՝ 45, խմբայինը՝ 40 րոպե է:

Դպրոցի սովորողների գիտելիքների գնահատումը կատարվում է ուսումնական պլանով նախատեսված առարկաների մասով կազմակերպվող ստուգարքներով եւ քննություններով: Քննությունը գնահատվում է գնահատման 10 միավորային համակարգով: Դպրոցի եւ սովորողի ծնողի փոխադարձ համաձայնությամբ սովորողի անհատական պարապմունքների՝ անընդմեջ մինչեւ 16 դասաժամ հարգելի բացակայության դասաժամերը կարող են համալրվել՝ դպրոցի առաջարկած ժամանակացույցի համաձայն:

Դրսեկության ձեւով (էքստեռն) դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ փոխադրումը կազմակերպվում է՝ ուսումնական պլանով նախատեսված ստուգարքների եւ քննությունների հանձնման, սովորողի գերազանց առաջադիմության, դպրոցի մանկավարժական խորհրդի հավանության եւ լիազոր մարմնի թույլտվության դեպքում: Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում սովորողը դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

Դպրոցի ավարտական վկայականը տրվում է ավարտական ստուգարքներն ու քննությունները հանձնած եւ ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասաժամերի առնվազն 70% հաճախում ունեցած սովորողներին: Դպրոցում վճարովի հիմունքներով կարող է կազմակերպվել նախադպրոցական, հետդպրոցական, ինչպես նաեւ ընդհանուր գեղագիտական զարգացման գծով ուսումնառություն:

Տեսական առարկաների (սոլֆեջո, երաժշտական գրականություն, արվեստի պատմություն, երաժշտական գրագիտություն եւ ունկնդրում) խմբային պարապմունքների մեկ խմբում ընդգրկված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում փոքր համակազմ ունեցող դպրոցում այն կարող է սկսել 3 սովորողից: Լիազոր մարմնի որոշմամբ՝ դպրոցում ուսուցումը կարող է կազմակերպվել հեռավար եղանակով:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հասանելի կրթական ծառայություններ

սկիզբը՝ էջ 1

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը նախարարության անունից շնորհավորել է խորհրդակցության մասնակիցներին՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ՝ նաեւ շնորհակալություն հայտնելով կատարած աշխատանքի համար. *«Անելիքները շատ են. երկրի առջեւ բազմապիսի մարտահրավերներ կան, ու այս առումով կրթության համակարգի յուրաքանչյուր ներկայացուցչի դերն ու նրա աշխատանքի որակն էլ ավելի մեծ կարեւորություն է ստանում»:*

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է կրթական համակարգի մի շարք նորությունների՝ պարզաբանումներ ներկայացնելով կատարված օրենսդրական, վարչարարական փոփոխությունների, փորձարկվող կրթական նոր չափորոշիչների, առաջին անգամ անցկացվող ՆՈՒՀ-երի տնօրենների հավաստագրման գործընթացի, դպրոցների ֆինանսավորման կարգի փոփոխությունների եւ այլնի վերաբերյալ:

«Սյունիքի մարզում մեր շեշտադրումն ու կարեւոր խնդիրներից մեկը կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովումն է»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Փոխնախարարը տեղեկացրել է նաեւ, որ այս տարի ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը կկազմակերպվի մարզերում՝ այդ նպատակով ԳԹԿ-ի կողմից ձեւավորված քննական կենտրոններում:

Ներկաներին ողջունել է նաեւ փոխմարզպետ Հայկ Հարությունյանը՝ շնորհակալություն հայտնելով անցած ուսումնական տարին հաջող ավարտելու համար, քանի որ այն առաջին ուսումնական տարին էր, որը համավարակից ու պատերազմից հետո ունեցավ բնականոն ընթացք:

«Անկախ ստեղծված իրավիճակից՝ կարողացել ենք ճիշտ հունով տանել կրթական գործընթացները, որի ապացույցն ամփոփվող տարվա արդյունքներն են»,- ասել է Հայկ Հարությունյանը՝ կրթական բարեփոխումների համար շնորհակալություն հայտնելով նախարարի տեղակալին:

Մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Մերի Գանդալյանը ներկայացրել է Սյունիքի՝ անցած ուստարվա կրթական, մշակութային եւ սպորտային հաջողությունները, համակարգի ձեռքբերումներն ու գրանցած արդյունքները:

Մարզը 2020-2021 ուստարում ունեցել է 15 մեդալակիր, բուհ է ընդունվել 463 շրջանավարտ, նրանցից 105-ը՝ անվճար: Նախնական տվյալներով այս տարի Սյունիքում առաջին դասարան է հաճախելու 1550 աշակերտ:

Վարչության պետը շնորհակալություն է հայտնել այն դպրոցների տնօրեններին, ուսուցիչներին եւ աշակերտներին, որոնք 2021-2022 ուստարում բարձր արդյունքներ են ցուցաբերել առարկայական օլիմպիադաներում, գիտական ու մարզական մրցումներում:

Խորհրդակցության ընթացքում կրթական ու կազմակերպական առանձին թեմաների մասին խոսել են նախարարության տարբեր ստորաբաժանումների եւ կրթական ոլորտի պետական կազմակերպությունների ղեկավարները:

Հանդիպման ավարտին Ժաննա Անդրեասյանն ու ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները պատասխանել են ներկաների հարցերին:

Ուսուցչի ծանրաբեռնվածության կթեթեւանա

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ շարունակվում են օգոստոսյան խորհրդակցությունները՝ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների եւ փոխտնօրենների մասնակցությամբ:

Հերթական քննարկումը տեղի է ունեցել Վայոց ձորի մարզպետարանում, որին մասնակցել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը,** Վայոց ձորի մարզպետ **Արարատ Գրիգորյանը,** նախարարության եւ մարզպետարանի ոլորտային պատասխանատուներն ու մարզային ենթակայության հանրակրթական հաստատությունների ղեկավարները:

Խորհրդակցության ընթացքում ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է կրթական համակարգի բարեփոխումները՝ մասնավորապես կարեւորելով հանրակրթության նոր չափորոշչի փորձարկումը: Նա տեղեկացրել է, որ նոր չափորոշչով ուսուցչի աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է շաբաթական ծանրաբեռնվածության թեթեւացում:

Չափորոշիչն անցյալ տարվանից փորձարկվում է Տավուշում, իսկ 2023 թվականի սեպտեմբերից փուլային կարգով կներդրվի ողջ հանրապետությունում:

Անդրադառնալով մարզում ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախորդ ուսումնական տարում Վայոց ձորի մարզից ատեստավորվել է 4 մանկավարժ, իսկ այս տարի կամավոր ատեստավորման հայտ է ներկայացրել 97-ը: Նախարարի տեղակալը տնօրեններին հորդորել է խրախուսել ուսուցիչներին, որպեսզի նրանք առավել ակտիվ մասնակցեն կամավոր ատեստավորմանը,

որը մասնագիտական կատարելագործման եւ աշխատավարձի բարձրացման իրական հնարավորություն է:

Նախարարի տեղակալի խոսքով՝ զուգահեռաբար մշակվում է նաեւ կրթական հաստատությունների ղեկավարների աշխատավարձի բարձրացման նախագիծ:

Վայոց ձորի մարզի դպրոցների տնօրենների հետ քննարկման ընթացքում Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչները պարզաբանումներ են ներկայացրել հանրակրթության նոր չափորոշչի ներդրման, *«Հանրակրթության մասին»* օրենքի փոփոխության, դպրոցներում համընդհանուր ներառական կրթության ապահովման, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, ներդպրոցական խնդիրների լուծման նպատակով դրամաշնորհային ծրագրերին դիմելու հարցերի շուրջ:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել նախարարի տեղակալին եւ բոլոր բանախոսներին՝ կրթական բարեփոխումների վերաբերյալ հանգամանալից տեղեկատվության հաղորդման, իսկ մասնակիցներին՝ ակտիվ երկխոսության համար: Արարատ Գրիգորյանը նաեւ շնորհավորել է կրթական համակարգի աշխատակիցներին գալիք ուսումնական տարվա կապակցությամբ՝ մաղթելով արդյունավետ տարի:

Հիշեցնենք՝ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների տնօրենների եւ փոխտնօրենների մասնակցությամբ օգոստոսյան խորհրդակցությունները մեկնարկել են Տավուշի մարզից: Քննարկումներ են տեղի ունեցել նաեւ Արագածոտնի, Արմավիրի եւ Արարատի մարզերում:

Ապագայի երաշխավորը

սկիզբը՝ էջ 1

Փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը շնորհավորական խոսքում ընդգծել է՝ ՀՀ կառավարության համար գերակա խնդիր է կրթության եւ գիտության զարգացումը, որի շնորհիվ է միայն հնարավոր հասնել երկրի կայուն զարգացման եւ համընդհանուր բարեկեցության:

Ողջունելով եւ շնորհավորելով շրջանավարտներին ու պրոֆեսորադասախոսական կազմին՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը շեշտել է՝ ՃՇՀԱ համալսարանն աչքի է ընկնում կրթական ծրագրերով, առողջ մրցակցությամբ, լավ արդյունքներով, պահանջարկ ունեցող բանիմաց մասնագետներով:

«Շնորհավորում եմ, սիրելի՛ ուսանողներ ու գործընկերներ, շնորհավորում եմ բոլորիս, որովհետեւ բոլորս էլ, ի վերջո, քաջ գիտակցում ենք՝ կրթությունն է այն բանալին, որով պետք է բացենք դեռ փակ դռները եւ հարթենք դեպի բարգավաճում տանող ուղիները: Բարձրագույն կրթության ոլորտում հստակ նախանշել ենք մեր անելիքները, որոնք դյուրին չեն, բայց միասին պետք է հաղթահարենք եւ կերտենք մեր ապագան»,- ասել է ԿԳՄՍ նախարարը:

Առանձնակի կարեւորվել են համալսարանում վերջին տարիներին իրականացված կրթական ծրագրերի բարեփոխումները եւ նյութատեխնիկական բազայի թարմացումը:

Միջոցառումն ուղեկցվել է մշակութային կատարումներով. հյուրընկալվել էին *«Բերդ»* անսամբլը, *«Սարդարապատ»* պարային համույթը, Մնջախաղի պետական թատրոնը եւ մշակութային այլ խմբեր:

ՄԿՈՒ

Սահմանվել են փաստաթղթերի ընդունման ժամկետները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը հրաման է ստորագրել՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրման քննությունների կազմակերպման եւ անցկացման վերաբերյալ:

Համաձայն հրամանի՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) համար հավակնորդների փաստաթղթերը կընդունվեն առցանց՝ https://exams.emis.am հղմամբ՝ 2022 թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 16-ը ներառյալ՝ քսանչորսժամյա ռեժիմով:

Հավաստագրման քննությանը մասնակցելու համար առցանց դիմումին կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները ու լուսանկարները: Դիմումները ներկայացնելու ուղեցույցը ներկայացված է հետեւյալ հղմամբ՝ https://support.emis.am/article/871:

- Դիմում (առցանց),

- անձնագիր եւ/կամ նույնականացման քարտի լուսապատճենը (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի կցում, ապա անհրաժեշտ է կցել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի(երի) լուսանկար,

- աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթերի լուսանկար,

- արական սեռի անձինք՝ նաեւ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսանկար:

Հավաստագրման քննությունների ժամանակացույցը կհաստատվի եւ սահմանված կարգով կհրապարակվի ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում:

Փաստաթղթերը պետք է ուղարկել PDF տարբերակով, ծավալը՝ 5 MB:

Կառավարությունը պատրաստ է նպաստել

սկիզբը՝ էջ 1

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանն ընդգծել է՝ մարմնամարզիկների վերջին հաջողությունները շատ ոգեւորիչ են. *«Շնորհավորում եմ ձեզ: Շատ ուրախ եւ հպարտ եմ՝ ձեր նվաճումների առթիվ: Դրանք շատ ոգեւորիչ են հատկապես հիմա, երբ մենք որդեգրել ենք այսուհետ հաղթանակների ուղիով շարժվելու ծրագիր: Սպորտն այն ասպարեզն է, որտեղ այդ հաղթանակներն առավել հանրային են, ոգեւորիչ եւ տպավորիչ: Փառք ու պատիվ ձեզ: Շնորհակալ եմ: Գիտեմ, թե որքան ջանք ու եռանդ եք գործադրել այս հաղթանակների համար՝ ձեր կյանքի մեծ մասը նվիրելով սպորտին: Կստա՛հ եղեք՝ Կառավարությունն իր հնարավորությունների սահմաններում եւ ավելին պատրաստ է ծառայել այն գործին, որը կնպաստի ձեր հետագա հաղթանակների արձանագրմանը»:*

Նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանի խոսքով՝ Հայաստանի մարմնամարզության հավաքականն արդեն իր ուրույն տեղն է գրավել համաշխարհային սպորտում, եւ ուրախալի է այն հանգամանքը, որ նմանօրինակ խոշոր մրցաշարերին արդեն կարողանում ենք թիմային մասնակցություն ապահովել. *«Վերջապես ձեւավորվել է հավաքական, որը մեր շատ ավանդույթներ ունեցող մարզաձեւում իր ուրույն տեղն է գրավել համաշխարհային սպորտում, եւ արդեն թիմով ենք մասնակցում այն մրցումներին, որոնց ժամանակին երազում էինք գոնե մեկ մասնակից ունենալ:*

Շնորհակալ եմ ամբողջ թիմին՝ ի դեմս գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանի, որ կարողացել է այսպիսի ուժեղ թիմ պատրաստել: Անչափ ուրախացել եմ Հարություն Մերդինյանի համար: 1998 թվականին՝ 24 տարի առաջ, Հարությունը Մոսկվայում առաջին անգամ մասնակցեց համաշխարհային պատանեկան խաղերին: Բնավորություն ու կամք է պետք այսքան երկար այս բարդ մարզաձեւում մնալու համար: Մյուս մարզիկներին եւս շնորհավորում եմ ու հպարտ եմ նմանօրինակ արդյունքների համար: Խնդրանքս է՝ նույն հետեւողականությամբ պատրաստվենք արդեն հաջորդ տարվա մրցումներին, քանի որ դրանք վարկանիշային են Փարիզի օլիմպիական խաղերի համար»:

Ֆեդերացիայի նախագահ Գագիկ Վանոյանն էլ ընդգծել է՝ քրտնաջան մարզումներն իրականացվում են ամենօրյա ռեժիմով. *«Շատ ուրախալի է՝ այդ ողջ ընթացքում մենք լիարժեք զգում ենք ՀՀ կառավարության եւ ԿԳՄՍ նախարարության աջակցությունը: Այդ ամենը խթանում է, որ մենք մեծ հաջողություններ ունենանք»:*

Նախարարի հետ հանդիպման ընթացքում Հայաստանի հավաքականի անդամները պատմել են իրենց տպավորությունների մասին, բարձր գնահատել մասնակցությունը Եվրոպայի առաջնությանն ու խոսել նաեւ առաջիկա ծրագրերի մասին:

Հիշեցնենք՝ Հայաստանի մեծահասակների հավաքականը 1 ոսկե եւ 1 արծաթե մեդալ է նվաճել Եվրոպայի առաջնությունում: Կարիերայում երկրորդ անգամ Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը նվաճել է 38-ամյա **Հարություն Մերդինյանը**՝ հավասարը չունենալով նժույգ թափեր վարժությունում: ԵԱ-ի փոխչեմպիոնի տիտղոսն էլ նվաճել է Տոկիոյի օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր **Արթուր Դավթյանը**՝ հենացատկից:

Երիտասարդ մարմնամարզիկներն էլ, **Արտակ Այդինյանի** գլխավորությամբ 1 ոսկե եւ 2 արծաթե մեդալ են նվաճել: Եվրոպայի չեմպիոն է դարձել **Էրիկ Բաղդասարյանը**՝ ոսկե մեդալ նվաճելով զուգափայտից, իսկ **Համլետ Մանուկյանը** հռչակվել է Եվրոպայի կրկնակի փոխչեմպիոն: Մանուկյանը երկու արծաթե մեդալ է նվաճել նժույգ թափեր եւ օղակներ վարժություններից:

Նախակրթարան

Նոր միկրոծրագրեր համայնքներում

«Կրթության բարելավում ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի շրջանակում մեկնարկել է *«Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում եւ կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում»* ենթածրագիրը, որի համատեքստում ՀՀ մարզերի համայնքներում այս տարի կիրակացվեն նախակրթարանների նոր միկրոծրագրեր:

Բոլոր մարզերում նախատեսվելիք ուսումնասիրությունները կվերհանեն սոցիալապես անապահով այն համայնքներն ու հաստատությունները, որոնք կարող են իրականացնել նախադպրոցական կրթական ծառայություններ: Լրացուցիչ ֆինանսավորմամբ նախատեսվում է մատչելի եւ կայուն նախադպրոցական կրթական ծառայությունների ստեղծում ընտրված համայնքներում:

ՀՀ ԿԳՄՍՆ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի ներկայացուցիչներն այս գործընթացի կարիքների գնահատման, տարածքի ուսումնասիրման եւ իրազեկման գործողությունների կազմակերպման նպատակով շրջայցեր են իրականացրել ՀՀ Արմավիրի եւ Արագածոտնի մարզի կրթական հաստատություններում: Վերոնշյալ մարզպետարանների համապատասխան վարչությունները ՕԻԳ են ներկայացրել այն համայնքների ցանկը, որոնցում առկա է նախակրթարան հիմնելու անհրաժեշտությունը:

ՕԻԳ-ի ներկայացուցիչները, մասնավորապես, եղել են ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկի, Լուկաշինի, Մյասնիկյանի, Բերքաշատի, Արազափի, Զարթոնքի, Անկաշենի, Այգեշատի, Դալարիկի, Երվանդաշատի միջնակարգ եւ Արագածոտնի մարզի Աշտարակի թիվ 3 հիմնական դպրոցում, ինչպես նաեւ Մուղնու, Բյուրականի, Լեռնապարի, Ագարակավանի, Թալինի, Աշնակի ուսումնական հաստատություններում:

Այցերի շրջանակում տեղի են ունեցել աշխատանքային հանդիպումներ վերոնշյալ հաստատությունների տնօրենների հետ, որոնց ընթացքում ՕԻԳ-ի աշխատակիցները պարզաբանել են նախադպրոցական կրթության միկրոծրագրերի բնույթը, անդրադարձել միկրոծրագրերի կազմակերպման գործընթացին եւ դիտարկել տարածքի նպատակահարմարությունը:

Նշենք, որ ուսումնասիրությանը հաջորդելու են գնահատման եւ խթանման աշխատանքները:

Օգոստոսյան

Դպրոցներում ներդրվելու են մասնագիտական կողմնորոշման ակումբներ

Արարատի մարզպետարանում օգոստոսի 25-ին տեղի է ունեցել հանրակրթական դպրոցների 2022-2023 ուսումնական տարվա օգոստոսյան խորհրդակցությունը, որը վարել է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**:

Քննարկմանը մասնակցել են ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը,** ԿՁՆԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը,** ԿՏԱԿ–ի տնօրեն **Արտակ Պողոսյանը,** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն **Արաքսիա Սվաջյանը,** նախարարության, մարզպետարանի ոլորտային պատասխանատուներն ու դպրոցների տնօրենները:

Հանդիպմանը քննարկվել են նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներին առնչվող հարցեր: Նախարարի տեղակալը ներկայացրել է կրթական համակարգի բարեփոխումները՝ նշելով, որ հանրակրթության նոր պետական չափորոշչի ներդրմանն ընդառաջ՝ հանրապետության բոլոր դպրոցների տնօրենները, փոխտնօրեններն ու մանկավարժները պետք է անցնեն վերապատրաստումներ:

Չափորոշիչն անցյալ ուսումնական տարվանից փորձարկվում է ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում: Անցյալ տարի չափորոշիչները փորձարկվել են 2-րդ, 5-րդ, եւ-րդ եւ 10-րդ դասարաններում: Այս տարի փորձարկումն իրականացվելու է 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ դասարաններում: 2023 թվականի սեպտեմբերից հանրակրթության նոր չափորոշիչը փուլային կարգով ներդրվելու է հանրապետության բոլոր դպրոցներում:

Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ հանրակրթության նոր չափորոշչով նախատեսված է բոլոր դպրոցներում բնագիտական նոր լաբորատորիաներ հիմնել: Դպրոցների ֆինանսավորման նոր բանաձեւում առանձին ֆինանսավորում է նախատեսված լաբորատորիաների պահպանման եւ գործարկման համար:

Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման կարեւորությունն ընդգծելով՝ փոխնախարարը նշել է, որ ըստ նոր չափորոշչի՝ բոլոր դպրոցներում ներդրվելու են մասնագիտական կողմնորոշման ակումբներ:

Նշվել է, որ Արարատի մարզից կամավոր ատեստավորմանը մասնակցելու հայտ է ներկայացրել 311 մանկավարժ: Անցյալ տարվա փորձարկման ծրագրով՝ մարզից 22 մանկավարժ ատեստավորվել է եւ արդեն ստանում է կարգով նախատեսված հավելավճարները եւ սահմանված բարձր դրույքաչափը:

Փոխնախարարը ներկայացրել է նաեւ բուհական ընդունելությունների մարզային արդյունքները. այս տարի մարզի 961 դիմորդներից եւ 33-ն ընդունվել են տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Խորհրդակցության ընթացքում նախարարի տեղակալն ու մյուս պատասխանատուները պատասխանել են տնօրենների հարցերին, որոնք վերաբերել են դպրոցների շենքային պայմանների բարելավմանը, աշխատավարձերի բարձրացմանը, վարչական աշխատողների դասավանդմանն առնչվող նոր օրենսդրական կարգավորմանը եւ այլ խնդիրների:

Հատուկ ուշադրություն՝ բնագիտական լաբորատորիաներին

Արմավիրի մարզպետարանում կայացել է 2022-2023 ուսումնական տարվա օգոստոսյան խորհրդակցությունը, որին մասնակցել են Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը,** ԿՁՆԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը,** մարզպետի տեղակալ **Առնակ Ավետիսյանը,** ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը,** նախարարության եւ մարզպետարանի ոլորտային պատասխանատուները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը ողջունել է Արմավիրի մարզի դպրոցների տնօրեններին եւ որպես առաջնահերթություն՝ կարեւորել է հանրակրթության նոր պետական չափորոշչի ներդրմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների ապահովումը: Նա տեղեկացրել է, որ 2023 թվականի սեպտեմբերից փուլային կարգով այն կներդրվի հանրապետության բոլոր դպրոցներում: Որպես նախապատրաստական քայլ՝ նախատեսվում են ուսուցիչների վերապատրաստումներ: Նախարարի տեղակալը տեղեկացրել է, որ հանրակրթության նոր չափորոշչում ԲՏՃՄ ուղղության վրա շեշտադրում է արված, եւ այս համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվելու բնագիտական լաբորատորիաների արդյունավետ կիրառմանն ուսուցման գործընթացում: Ժաննա Անդրեասյանի հավաստմամբ՝ այս բոլոր խնդիրները հաշվի են առնված դպրոցների ֆինանսավորման նոր բանաձեւում:

Անդրադառնալով մարզի ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացին՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ արդեն 28 մանկավարժ ատեստավորվել է, եւս 300-ն էլ մասնակցելու հայտ է ներկայացրել: Նրա խոսքով՝ 2022 թվականի ուսուցիչների կամավոր ատեստավորումը տեղի է ունենալու սեպտեմբերին: Ըստ առարկաների՝ ուղեցույցներն արդեն հրապարակվել են, իսկ ժամանակացույցը կհաստատվի առաջիկայում:

«Մենք հույս ունենք, որ հաշվի առնելով նաեւ այս տարվա արդյունքները՝ հետագա տարիներին կամավոր ատեստավորմանը մասնակցելու դիմումներն ավելի շատ կլինեն»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նա նաեւ հիշեցրել է, որ կամավոր ատեստավորման արդյունքում ուսուցչի դրույքաչափը սահմանվել է 200 հազար դրամ, որի նկատմամբ կիրառվում է 30-50% հավելավճար՝ ըստ ուսուցչի՝ ատեստավորման ընթացքում ստացած միավորների: Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ կամավոր ատեստավորման եւ որակավորման տարակարգի համադրմամբ՝ մանկավարժը կարող է ստանալ ավելի քան 400 հազար դրամ աշխատավարձ: Նա հավելել է, որ, զուգահեռաբար, մշակվում են նոր մեխանիզմներ, որոնց ներդրմամբ կբարելավվի մանկավարժների վարձատրությունը: Գյուղական փոքր դպրոցներում բնագիտական եւ SS ուղղությունների առարկաներ դասավանդող բոլոր ուսուցիչների համար նախատեսվում է ներդնել հավելավճարի համակարգ՝ անկախ ատեստավորումից:

Փոխնախարարը տեղեկացրել է, որ Արմավիրի մարզից այս տարի բարձրագույն ուսումնական հաստատություններ է ընդունվել շուրջ 714 դիմորդ՝ մարզի ընդհանուր դիմորդների 71.9%-ը:

Կարեւորելով կրթական գերատեսչության նախաձեռնությամբ օգոստոսյան խորհրդակցության կազմակերպումը՝ փոխմարզպետ Առնակ Ավետիսյանը նշել է, որ այն միտված է ոլորտի առջեւ ծառացած խնդիրների, նոր ուսումնական տարվա հիմնական անելիքների քննարկմանն ու պարզաբանմանը:

Պատասխանելով խորհրդակցության մասնակիցների հարցերին՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալն անդրադարձել է նաեւ տնօրենների աշխատավարձերի նախատեսվող բարձրացմանը՝ նշելով, որ այժմ մշակվում է նոր կարգ, որը ենթադրաբար ուժի մեջ է մտնելու 2023 թվականի սեպտեմբերից եւ հնարավորություն է տալու բարձրացնելու տնօրենների, փոխտնօրենների եւ վարչական մյուս աշխատողների աշխատավարձերը:

ԿՁՆԱԿ-ի տնօրեն Արտաշես Թորոսյանն էլ ներկայացրել է հանրակրթության նոր չափորոշչի ներդրմանն առնչվող մի շարք պարզաբանումներ:

Խորհրդակցությունն ամփոփվել է հարց ու պատասխանով:

Աշխարհի հետ

Դերենիկ Դումանյանն ընդունել է Օմսկի նահանգապետի գլխավորած պատվիրակությանը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանն** ընդունել է Ռուսաստանի Դաշնության Օմսկի նահանգապետ **Ալեքսանդր Բուրկովի** գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ **Արթուր Մարտիրոսյանը** եւ **Կարեն Գիլոյանը:**

ՌԴ պատվիրակության կազմում էին նահանգի երիտասարդության հարցերի, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի նախարար **Դմիտրի Գրիգորյանցը,** կրթության նախարարի տեղակալ **Ելենա Կորչագինան**, Օմսկի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր **Իվան Կրոտտը** եւ այլք:

Ողջունելով պատվիրակության անդամներին՝ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջպետական հարաբերություններում առանձնահատուկ տեղ է գրավում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում համագործակցությունը: Նախարարը փաստել է՝ համատեղ նախագծերի իրականացումը եւ փորձի փոխանակման հնարավորությունն ուղղակիորեն կնպաստեն երկու երկրների միջեւ երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը:

«Մենք շատ ընդհանրություններ ունենք, եւ վստահ եմ, որ համագործակցության համատեղ հարթակների ստեղծումը լավ հնարավորություն կլինի նաեւ երիտասարդների միջեւ շփման տեսանկյունից»,- նշել է Վահրամ Դումանյանը՝ համատեղ ծրագրերի իրականացման շուրջ կառուցողական երկխոսություն սկսելու պատրաստակամություն հայտնելով: Նախարարը կարեւորել է նաեւ Օմսկի մեր հայրենակիցների՝ մայրենի լեզվով ուսուցման, ինչպես նաեւ համապատասխան դասագրքերով ապահովման հնարավորությունը:

Օմսկի նահանգապետ Ալեքսանդր Բուրկովը, շնորհակալություն հայտնելով՝ ընդունելության համար, ներկայացրել է Օմսկի նահանգում կրթության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում իրականացվող գործընթացները՝ առաջարկելով համագործակցության տարբեր ձեւաչափեր: Նրա խոսքով՝ Օմսկի բուհերում սովորող շուրջ 80 հազար ուսանողներից 11 հազարն օտարերկրացի է, այդ թվում՝ ՀՀ-ից: Ալեքսանդր Բուրկովը շեշտել է Հայ-ռուսական համալսարանի եւ ՀՀ այլ բուհերի հետ համագործակցության կարեւորությունը: Նա նաեւ անդրադարձել է նահանգի բուհերում հայագիտական կենտրոնի ստեղծման հնարավորությանը, ներկայացրել Օմսկի հայկական դպրոցի գործունեությունը: Նահանգապետը կարեւորել է հայկական սփյուռքի ներուժը եւ ակտիվ ներգրավվածությունը Հայաստանի եւ Օմսկի միջեւ իրականացվող համագործակցության ծրագրերում:

Հանդիպմանը կողմերն անդրադարձել են նաեւ մասնագիտական կրթության եւ ուսուցման, սպորտի եւ մշակույթի ոլորտներում համագործակցությանը, մասնավորապես՝ համատեղ մարզական միջոցառումների անցկացման եւ երկու երկրներում թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպման հնարավորությանը:

Նշենք, որ ՀՀ կատարած այցի ընթացքում պատվիրակության անդամներն այցելել են Վ. Բրյուսովի անվան պետական եւ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններ, *«Օլիմպավան»* մարզաառողջարարական կենտրոն եւ Վ. Սարգսյանի անվան *«Հանրապետական»* մարզադաշտ:

Հեռակա ուսուցում

Ընդունելության քննությունները կանցկացնի ԳԹԿ-ն

Մեկնարկում է բուհերի հեռակա ուսուցման ընդունելության քննությունների հայտագրման գործընթացը:

ՀՀ պետական եւ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության կանոնների համաձայն՝ դիմորդը հայտագրումն իրականացնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի *«dimord.am»* կայքում՝ սեպտեմբերի 5-ից մինչեւ սեպտեմբերի 25-ը՝ ժամը 18:00-ն:

Հեռակա ուսուցման ընդունելության քննությունները կազմակերպում եւ անցկացնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնը: Քննություններն անցկացվում են գրավոր՝ թեստերի միջոցով: ՀՀ ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի քննությունը հանձնում են միեւնույն օրը: Քննությունների օրերը, ըստ առարկաների, հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

Դիմորդն ընդունելության դիմում-հայտում իր ընտրությամբ եւ ցանկացած հաջորդականությամբ հայտագրում է մասնագիտությունները (կրթական ծրագրերը) եւ տվյալ մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված առավելագույնը երկու ընդունելության քննությունները: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ բուհի մինչեւ երեք մասնագիտությունների (կրթական ծրագրերի) վճարովի մրցույթին, որոնց համար սահմանված են ընդունելության միեւնույն քննությունները:

Միասնական քննություններն անցկացվում են հոկտեմբերի 20-27-ը: Ներբուհական քննությունների անցկացման համար բուհերի կողմից կարող են սահմանվել այլ ժամկետներ: Քննություններն անցկացվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչեւ տվյալ տարվա հոկտեմբերի 5-ը հաստատում է ԳԹԿ-ը տնօրենը:

Ներբուհական քննությունների անցկացման համար ԳԹԿ-ի տնօրենի հրամանով մինչեւ տվյալ տարվա սեպտեմբերի 27-ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ:

Բուհերի ընդունելության մրցույթը, բացառությամբ ներբուհական քննություններ հանձնած դիմորդների մրցույթի, անցկացնում է ԳԹԿ-ն՝ ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի), հատկացված տեղերի եւ միավորների: Մասնագիտությունների (կրթական ծրագրերի) մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված մասնագիտության (կրթական ծրագրի) գերակայությամբ:

Դիմորդները կարող են պահպանել տվյալ տարվա միասնական եւ տվյալ բուհի համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար հանձնած ներբուհական քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով նաեւ միասնական եւ ներբուհական կարգով հանձնած քննական առարկայի գնահատականը, տվյալ առարկայից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

Առաջին հայտագրված մասնագիտության (կրթական ծրագրի) մրցույթով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան, դիմորդի միավորներով, եթե նշված մասնագիտություններում առկա են թափուր տեղեր:

Նշենք, որ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2022/2023 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության տեղերը՝ ըստ բուհերի եւ մասնագիտությունների:

Ըստ այդմ՝ ՀՀ պետական բուհերին հատկացվել է 7726 հեռակա ուսուցման ընդունելության տեղ: Համաձայն հրամանի՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներն ուսման վարձի չափը պետք է սահմանեն ոչ ավելի, քան առկա ուսուցման համապատասխան մասնագիտության համար հաստատված ուսման վարձի չափը:

Համայնքային

Լաբորատորիաները՝ արդիական ուսումնական միջավայր

«Կրթության բարելավում ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում *«Հանրակրթական դպրոցների վերազինում»* ենթաբաղադրիչի կարիքների գնահատման նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ *«Կրթական ծրագրերի կենտրոն»* ՕԻԳ-ի ներկայացուցիչները շրջայցեր են կատարել Արմավիրի մարզի մի շարք համայնքներում: Մասնավորապես՝ նրանք ուսումնասիրություններ են իրականացրել մի շարք համայնքների կրթական հաստատություններում, ինչպես նաեւ Արմավիրի թիվ 2, թիվ 3, թիվ 5, թիվ 6, թիվ 8, թիվ 9, թիվ 10 դպրոցներում: Յուրաքանչյուր դպրոցում կատարվել է կարիքների գնահատում՝ հիմնական ենթակառուցվածքների առկայությունն ապահովելու եւ լաբորատոր սարքավորումների օգտագործման մոնիտորինգի համակարգ ներդնելու նպատակով:

ԿՕԿ ՕԻԳ-ի ներկայացուցիչները դպրոցների տնօրենների հետ քննարկել են նախատեսվող աշխատանքներն ու ծրագրի իրականացման ընթացքը: Նրանք փաստել են՝ ստեղծվող լաբորատորիաները համայնքների դպրոցներում կդառնան արդիական ուսումնական միջավայրեր, որտեղ աշակերտը կարող է տեսական գիտելիքներն ամրապնդել գործնական հմտություններով, գիտափորձեր կատարել համապատասխան նյութերով եւ սարքավորումներով: Շեշտվել է, որ նորարարական լաբորատորիաները շատ կարեւոր են բնագիտական ոլորտի զարգացման, ինչպես նաեւ աշակերտների մասնագիտական կողմնորոշման տեսանկյունից:

Նշենք, որ *«Հանրակրթական դպրոցների վերազինում»* ենթաբաղադրիչը նպատակաուղղված է բարելավելու հանրակրթական դպրոցների դասավանդման եւ ուսուցման պայմանները՝ մոտ 200 հանրակրթական դպրոցների տրամադրելով բնագիտական եւ ինժեներական լաբորատոր սարքավորումներ, կահույք եւ նյութեր:

Դպրոցները կընտրվեն հանրապետության ողջ տարածքից՝ բացառությամբ ՀՀ Տավուշի մարզի դպրոցների, քանի որ վերջիններիս սարքավորումներ, կահույք, նյութեր եւ վերապատրաստումներ կտրամադրվեն՝ *«ԵՄ-Ն հանուն նորարարության»* ծրագրի շրջանակներում:

Հավելենք, որ նախատեսվում է նաեւ ուսուցիչների եւ տնօրենների վերապատրաստման նյութերի մշակում եւ տրամադրում՝ ձեռնարկի եւ ցուցադրական տեսանյութերի հետ մեկտեղ, որոնք կվերաբերեն լաբորատոր սարքավորումների շահագործմանը եւ ընթացիկ սպասարկմանը, ինչպես նաեւ դասապրոցեսում այս սարքավորումների օգտագործմանը՝ դասավանդման ժամանակակից մեթոդաբանությունների եւ թվային ուսումնաօժանդակ նյութերի կիրառմամամբ: Ժամանակակից կահավորմանը զուգահեռ քիմիայի եւ կենսաբանության լաբորատորիաներում նախատեսվում է իրականացնել նաեւ ջրամատակարարման եւ ջրահեռացման մոնտաժային աշխատանքներ:

Օգոստոսյան

Համատեղ եւ շարունակական աշխատանքով

2022-2023 ուսումնական տարվա օգոստոսյան խորհրդակցությունները շարունակվում են. կայացել է հերթական հանդիպումը Արագածոտնի մարզի հանրակրթական 118 դպրոցների տնօրենների մասնակցությամբ:

Քննարկմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը,** ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը,** ԿՁՆԱԿ-ի տնօրեն **Արտաշես Թորոսյանը,** Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար **Հրաչյա Գեւորգյանը,** Կրթության եւ մշակույթի վարչության պետ **Գալուստ Թադեւոսյանը:**

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը ողջունել է Արագածոտնի մարզի կրթության ոլորտի պատասխանատուներին՝ ընդգծելով նախորդ տարի համավարակի պայմաններում կրթական գործընթացն ապահովող ուսուցիչների ջանքերը. *«Հայաստանն այն քիչ երկրներից է, որը համավարակի պայմաններում կարողացել է հնարավորինս ապահովել կրթության շարունակականությունը: Գնահատելի են ձեր ջանքերը տարբեր դասաժամերի ընթացքում աշակերտներին արտակարգ դրության պայմաններում սովորելու կարգուկանոնի վերաբերյալ պատշաճ իրազեկումն ու այս ուղղությամբ նրանց իմացության բարձրացումը»:*

Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է նաեւ միասնական քննությունների արդյունքներին՝ մատնանշելով այն առարկաները, որոնց ցուցանիշները խնդրահարույց են եւ արձանագրել՝ լուծումները պետք է գտնել համատեղ ու շարունակական աշխատանքով: Դպրոցներում մասնագիտական կողմնորոշման կարեւորությունն ընդգծելով՝ փոխնախարարը նշել է, որ ըստ նոր չափորոշչի՝ բոլոր դպրոցներում ներդրվելու են մասնագիտական կողմնորոշման ակումբներ:

«2023 թ. սեպտեմբերից սկսած՝ բոլոր դպրոցներում մեկնարկելու է նոր չափորոշիչների ներդրման գործընթացը, որը ենթադրում է նախապատրաստական ծավալուն աշխատանք՝ բոլոր մարզերի հանրակրթության ոլորտի մասնագետների ներգրավմամբ»,- ասել է նա:

Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղարը ներկայացրել է մարզի կրթական հաստատություններում իրականացված մոդուլային դպրոցների կառուցման, մարզպետարանի բյուջեից տնտեսված գումարների հաշվին կրթօջախներում ընթացող ծավալուն վերանորոգման աշխատանքները: Քննարկման ընթացքում անդրադարձ է եղել դասագրքերի հայտագրման եւ բաշխման խնդրին. նշվել է, որ դպրոցները կստանան այնքան դասագիրք, որքան նրանք նախապես էլեկտրոնային եղանակով հայտագրել են:

Նշվել է, որ նաեւ մարզի շրջանավարտների բուհեր ընդունվելու ցուցանիշը գոհացուցիչ է, դրական արդյունք է արձանագրվել նաեւ միջազգային օլիմպիադաներում մասնակիցների ակտիվության առումով:

Խորհրդակցությանը քննարկված հաջորդ հարցերն էին ուսուցիչների վարձատրության համակարգի փոփոխությունները, կամավոր ատեստավորման գործընթացը, որի առանձնահատկություններն ու ընձեռած հնարավորությունները հանգամանալից պարզաբանել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

Փոխնախարարը իրազեկել է, որ փոքր թվաքանակ ունեցող դպրոցներում բազմահամակազմ դասարանների ձեւավորման կարգը վերանայվել է. անկախ աշակերտների թվից՝ բազմահամակազմ դասարաններ թույլատրելի են միայն արվեստի առարկաների եւ ֆիզկուլտուրայի համար: Մնացած առարկաների համար լինելու է առանձին ուսուցում:

Հանդիպման երկրորդ հատվածում ԿՁՆԱԿ-ի տնօրեն Արտաշես Թորոսյանը, ներկայացրել է նոր չափորոշիչների ներդրմանը, ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրերին վերաբերող առաջիկա անելիքները, իսկ Հանրակրթության վարչության պետ Արսեն Բաղդասարյանը պարզաբանումներ է ներկայացրել պաշտոնային նկարագրերի փոփոխության, վարչական աշխատողների՝ տնօրեն, փոխտնօրեն, դասավանդման եւ դրա հետ փոխկապակցվող հարցերի շուրջ:

Քննարկումը եզրափակվել է հարցուպատասխանով. ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները պատասխանել են տնօրենների հարցերին:

Ավագ դասարաններում անհատական դասացուցակ կլինի

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչները նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանի** գլխավորությամբ ուսումնական տարվան նախորդող հերթական օգոստոսյան խորհրդակցությունն անցկացրել են Գեղարքունիքի մարզում:

Խորհրդակցությանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի տեղակալ **Ռուբիկ Նավոյանը,** Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ **Կարեն Զազյանը,** ԿՁՆԱԿ տնօրենի պաշտոնակատար **Արտաշես Թորոսյանը,** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն **Արաքսիա Սվաջյանը,** ԿԳՄՍՆ հանրակրթության եւ արտադպրոցական ծրագրերի մշակման եւ իրականացման բաժնի պետ **Սուսաննա Ազատյանը:**

Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է ուսուցիչներին՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ՝ մաղթելով խաղաղ եւ արդյունավետ տարի:

Մանկավարժներին ողջունել եւ սերունդներին կրթելու պատասխանատու գործում հաջողություն է մաղթել նաեւ փոխմարզպետ Ռուբիկ Նավոյանը:

Փոխնախարար Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները՝ առանձին-առանձին անդրադառնալով դրանց՝ համապատասխան պարզաբանումներով: Նա մասնավորապես ընդգծել է դպրոցների ֆինանսավորման կարգի փոփոխությունը, ավագ դասարաններում անհատականացված դասացուցակի հնարավորությունը, որը նախատեսված է հանրակրթության նոր չափորոշչով:

«Նոր չափորոշիչը բոլոր դպրոցներում կկիրառվի 2023 թ.-ի սեպտեմբերից: Այս տարվանից 9-րդ դասարանին ուղղորդե՛ք, որ գալիք տարվանից ընտրեն այն առարկաները, որոնք ուզում են խորությամբ ուսումնասիրել»,- նշել է նա:

Ըստ նախարարի տեղակալի՝ ֆինանսավորման նոր կարգով մանկավարժները վարձատրվելու են նաեւ խմբակների եւ ուսումնական նախագծերի համար, որոնք առանձին տարիֆիկացվելու, հաշվարկվելու են ուսուցչի ծանրաբեռնվածության մեջ:

Ներկայացվել են ուսուցչի վարձատրության բարձրացմանը միտված պետական նոր ծրագրերը, այդ թվում՝ կամավոր ատեստավորումը, ինչի համար Կառավարությունը նոր կարգ է հաստատել, ըստ որի՝ կամավոր ատեստավորման արդյունքում հավելավճար ստացող ուսուցչի դրույքաչափը դարձել է 200.000 դրամ:

Կամավոր ատեստավորման նոր փուլն արդեն մեկնարկել է. Գեղարքունիքից դիմել է շուրջ 200 ուսուցիչ: Ըստ Ժ. Անդրեասյանի՝ հաջող արդյունք ցուցաբերած ուսուցիչները հոկտեմբերից սկսած կստանան նախատեսված բարձր աշխատավարձը: Այս տարի ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացը կկազմակերպվի մարզերում՝ ԳԹԿ-ի կողմից ձեւավորված քննական կենտրոններում՝ բացառությամբ մի քանի առարկաների՝ *«Նկարչություն», «ՆՀՊ», «Ֆիզկուլտուրա», «Տեխնոլոգիա»:*

Ուսուցչի աշխատանքի խրախուսման նպատակով մշակվում են նոր ծրագրեր, որոնցով նախատեսվում է գյուղական փոքր դպրոցների ուսուցիչներին հատկացնել հավելավճար՝ անկախ ատեստավորումից: Հավելավճարներ են նախատեսվում նաեւ բնագիտական եւ ՏՀՏ առարկաներ դասավանդող ոսուցիչների համար:

ԿԳՄՍ փոխնախարարի տեղեկացմամբ՝ որոշվել է հրաժարվել բազմահամակազմ դասարանների ուսուցումից, ինչը նպատակային չէ եւ խոչընդոտում է ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպմանը: Բազմահամակազմ կարող է լինել միայն *«Արհեստ, արվեստ»* եւ *«Ֆիզիկական կենսագործունեություն եւ անվտանգություն»* բնագավառների առարկաների ուսուցումը: Այս ուսուցիչները կվարձատրվեն ավելի, քան մեկ դասաժամի արժեքն է:

Ֆինանսավորման նոր կարգ է մշակվում նաեւ վարչական աշխատողների համար՝ սահմանելով նվազագույն աշխատավարձի գործակիցներ: Տնօրենների, տեղակալների եւ մյուս վարչաշխատողների վարձատրությունը համադրելիության մեջ կմտնի քաղծառայողների վարձատրության հետ:

Քննարկվել են տնօրենների եւ վարչատնտեսական համակարգողների գործառույթներին առնչվող հարցեր: Նշվել է, որ այս թեմայով առաջիկայում քննարկումներ կլինեն մարզպետարանների հետ՝ դպրոցների առանձնահատկությունները հաշվի առնելու համար:

Ըստ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի՝ նախատեսվում է օրենքով սահմանել հնարավորություն, որով տնօրենների համար հավաստագրվելու փոխարեն գործելու է ատեստավորման համակարգ, ինչը ենթադրելու է զարգացման ծրագրի կատարողական:

«Ձեր աշխատանքի որակից ուղղակիորեն կախված կլինեն դրա շարունակությունը եւ վարձատրության բարձրացումը: Դրական գնահատված տնօրենի պայմանագիրը ավտոմատ կերկարացվի եւս 5 տարի»,- ասել է Ժ. Անդրեասյանը:

Փոխնախարարն անդրադարձել է նաեւ *«Հանրակրթության մասին»* օրենքում վարչական աշխատողների դասավանդման վերաբերյալ փոփոխությանը: Ըստ նրա՝ չի արգելվում դասավանդելը, այլ հստակեցվում են պայմանները. առաջին հերթին տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը պետք է ապահովվի ամբողջ դրույքով:

ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները պարզաբանումներ են ներկայացրել հանրակրթության նոր չափորոշչի ներդրման, *«Հանրակրթության մասին»* օրենքի փոփոխության, դպրոցներում համընդհանուր ներառական կրթության ապահովման, ներդպրոցական խնդիրների լուծման վերաբերյալ եւ կոչ են արել ակտիվորեն դիմել ոլորտում ներկայացված դրամաշնորհային ծրագրերին:

Հանդիպումն ավարտվել է հարցուպատասխանով: Ներկաներին մասնավորապես հետաքրքրել են խմբակների ձեւավորման ու վարձատրության, միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչների հետագա գործունեության, դրույքաչափերի ապահովման վերաբերյալ եւ այլ հարցեր:

Տեսակետ

Սովորեցնել՝ նշանակում է սրել միտքը

«Կյանքի ամբողջ իմաստը ոչ հայտնին անընդհատ նվաճելու մեջ է, ավելի շատ իմանալու հավերժական ջանքերի մեջ»:

Է. Զոլա

Գիտելիքը մարդու ճանաչողական գործունեության արդյունքն է: Իսկ վերջինիս ձեւերն են՝ գիտականը, ոչ գիտականը: Երկրորդի մեջ մտնում են առողջ բանականությունը, անձնական փորձը, ավանդույթները, գեղարվեստական ճանաչողությունը, առասպելականի ու կրոնականի իմացությունը: Գիտական ճանաչողությունը իրական օրինաչափությունների արտացոլումն է՝ դիտումների, վերլուծությունների, եզրակացությունների արդյունք, որ կապված է նկարագրման, բացատրության, կանխատեսման հետ: Գեղարվեստական ճանաչողությունը գոյություն ունեցող իրականության արտացոլումն է նշանների, խորհրդանիշերի, կերպարների միջոցով: Առասպելական ճանաչողությունը բնորոշ է նախնադարյան մշակույթին: Դա իրականության բացատրությունն է զգայական-տեսանելի կերպարներով, գերբնական էակներով, որ հանդես են գալիս իբրեւ առօրյա կյանքի իրական մասնակիցներ: Կրոնական ճանաչողության կամ հավատի ակտը ունի անհատական-երկխոսական բնույթ: Դրա նպատակը ոչ թե Աստծո մասին պատկերացումների համակարգի ստեղծումն է, այլ մարդու փրկությունը, ում համար Արարչի մասին պատկերացումները նաեւ ինքնաճանաչման միջոց է, որ նրա գիտակցության մեջ ձեւավորում է բարոյական նորացման պահանջմունքներ: Փիլիսոփայական ճանաչողության մեջ մարդը ոչ միայն ձգտում է հասկանալ աշխարհն ու նրա օրինաչափությունները, այլեւ պարզել իր դերը Տիեզերքում, փորձում է ստեղծել կատարելատիպ, որի բովանդակությունը պայմանավորված է ընտրված աշխարհայացքով: Գիտական գիտելիքին հատուկ են տրամաբանական հիմնավորվածությունը, ապացուցելիությունը, արդյունքների վերարտադրելիությունը, հակասությունների հաղթահարումը: Մինչդեռ հակագիտական են երազական պատկերացումները կամ իրականության գիտակցված խեղաթյուրումները: Հատուկ հետաքրքրություն ու ձգտում դեպի հակագիտականը լինում է սոցիալական անկայունությունների շրջանում, երբ, օրինակ, փնտրվում է հեշտ հասանելի *«դեղ՝ բոլոր հիվանդությունների դեմ»:*

Կեղծ գիտականությունն իրենից ներկայացնում է ինտելեկտուալ ակտիվություն, որ հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ սպեկուլյատիվ մեկնաբանություններ ունի, օրինակ՝ հնադարի աստղագնացների մասին, ձնե մարդու մասին, Լոխ-Նեսսի լճի հրեշի մասին եւ այլն: Սենսացիաներ սիրողները շատ են, ու այդ միջավայրում էլ փնտրվում են կեղծ գիտականության *«պրոդուկտների»* շահառուները: Կեղծ էրուդիտի մասին պատմող մի երգիծական պատմվածք ունի Վ. Շուկշինը՝ *«Շշպռեց»…*

Մարդու առաջին մեծ հայտնագործություններից էին՝ կրակի տիրապետումը, անիվի գյուտը, նետ-աղեղը:

Մարդկությունն իր հիշողության մեջ պահպանեց նաեւ դատողությունների ու կռահումների փայլուն օրինակներ, գեղարվեստական երանգներ տալով դրանց:

Օրինակ՝ **Դեմոկրիտի** խնձորը: Ըստ հնադարի մեծ փիլիսոփայի՝ խնձորը կարելի է բազմիցս կիսել ու դանակը վերստին մխրճել նրա մեջ, որովհետեւ խնձորում առկա են դատարկ տարածություններ, իսկ ինքը՝ խնձորը, բաղկացած է փոքրագույն, բայց արդեն անբաժանելի մասնիկներից: Ինչու՝ անբաժանելի: Որվհետեւ կստացվեր, որ գոյություն ունի մասնիկ, որը, սակայն, անվերջ փոքր է:

Շատերը գիտեն **Արքիմեդի** պատմական լոգանքի մասին: Մտածելով, թե ինչպես որոշի անկանոն մարմնի ծավալը, Արքիմեդը կռահեց, որ ջրի մեջ այն ընկղմելիս արտամղված ջուրը պետք է ունենա նույն ծավալը: Մնացածն արդեն գուցե առասպել է. իր հանճարեղ հայտնագործությունից ոգեւորված՝ Արքիմեդը դուրս թռավ բաղնիքից ու մերկ վազեց փողոցով՝ բացականչելով՝ *«Է՛վրիկա»,* ասել է, թե՝ *«գտա՛»:* ***«Տվե՛ք ինձ հենման կետ, եւ ես կշրջեմ երկիրը»***. այս թեւավոր խոսքը Արքիմեդինն է:

Ոչ պակաս նշանավոր է Նյուտոնի խնձորը: Ըստ ավանդված պատմության՝ ծառից ընկնող այդ պտուղը հուշեց Նյուտոնին մի պարզ ու հանճարեղ հարց. ինչու՝ է այն ընկնում: Երկրի ծանրության ուժի, տիեզերական մարմինների փոխադարձ ձգողականության գաղափարը արդեն հասունացավ նրա մեջ:

«Ոչ պատահական պատահականություններին» մի ամբողջ գիրք է նվիրել Վ. Ազերնիկովը՝ պատմելով նաեւ գալվանական էլեկտրականության, էլեկտրոլիզի, մագնիսականության, ռենտգենյան ճառագայթների, ռադիոակտիվության, ճյուղավորված շղթայական ռեակցիաների եւ շատ ուրիշ բաների մասին:

Իսկ հիմա ցանկանում եմ տարբեր ժամանակաշրջաններում մարդու ձեռք բերած մի քանի այլ գիտելիքներից խոսել, որ մեկը մեկից զարմանալի են ու հիասքանչ:

Օրինակ՝ ինչպես են հնում մարդիկ գլխի ընկել, որ **Երկիրը գնդաձեւ է:** Այդ գաղափարը առաջիններից մեկը տվել է Պյութագորասը, իսկ հնում բերված ամենագեղեցիկ ու համոզիչ ապացույցը, կարծում եմ, **Արիստոտելինն** է: Նա ոշադրություն դարձրեց այն բանին, որ Լուսնի վրա խավարումների ժամանակ ընկնող Երկրի ստվերն ունի շրջանագծի աղեղի տեսք: Իսկ այդպիսի ստվեր կգցեն միայն գնդաձեւ մարմինները: Բայց որտեղի՞ց գիտենանք, որ այդ ստվերը հենց Երկրինն է: Բանն այն է, որ Լուսնի խավարումները լինում են միայն լիալուսնի ժամանակ, երբ Արեգակ-Երկիր-Լուսին համակարգի մարմինները նույն ուղղի վրա են:

Մեկ ուրիշ հետաքրքիր գիտելիք, որ դարձյալ հին հույները ձեռք բերեցին՝ չափեցին **Երկրի շառավիղը:** Դա շատ գեղեցիկ ու սրամիտ ձեւով մ.թ.ա. 3-րդ դարում արեց **Էրատոսթենեսը:**

Դեռ նրանից առաջ էլ նկատել էին, որ ամառային արեւադարձի ժամանակ Արեգակը լուսավորում է Սիենա քաղաքի խորը ջրհորների հատակը, իսկ Ալեքսանդրիայում՝ ոչ, որովհետեւ Սիենայում լուսատուն զենիթում է, Ալեքսանդրիայում՝ ոչ: Այդ փաստը գիտնականը, որին անվանում են աշխարհագրության հայր, օգտագործեց մ.թ.ա. 240 թ. հունիսի 19-ին: Արեւադարձի այդ օրը նա վերցրեց գավաթ՝ երկար ասեղով: Դրա օգնությամբ կարելի էր որոշել թե ինչ անկյան տակ է Արեգակը գտնվում Ալեքսանդրիայի երկնքում: Այդպես պարզվեց, որ անկյունը 7աստ.+- 12՛ էր, այսինքն՝ շրջանագծի 1/50-ը: Ուրեմն՝ Սիենան հետ է Ալեքսանդրիայից Երկրի շառավղի 1/50-ի չափով: Իմանալով քաղաքների միջեւ եղած հեռավորությունը ու նրանց աշխարհագրական լայնությունների տարբերությունը, հաշվեց Երկրի շառավիղը: Էրատոսթենեսը հիշյալ մեթոդով ստացավ, որ այն 6287կմ է, որը ժամանակակից ճշգրիտ մեթոդներով ստացված արդյունքից պակաս է ընդամենը... 84 կմ-ով:

Հին հույներն ակոսում էին Միջերկրականի ու Սեւ ծովի ջրերը, որը ճիշտ է, մեծ տարածություն էր, բայց՝ աշխարհը չէր: Ընդամենը երկու քաղաքների տվյալներ օգտագործելով, որոնք իրարից հեռու էին մոտ 1000 կմ-ով, նրանք արդեն կարող էին պատասխանել՝ ինչքան է պետք անցնել շուրջերկրյա ճանապարհորդության դեպքում: Ի դեպ, այդ գիտելիքը միջնադարյան Եվրոպայում մոռացվեց, իսկ ահա Հայաստանում **Շիրակացին** դա գիտեր եւ կարծում էր, որ Արեւը կարող է լուսավորել Երկրի երկու կողմերը օրվա տարբեր ժամերին ու երբ Երկրի մի կողմում ցերեկ է, մյուսում՝ գիշեր —գնդաձեւությունն է պատճառը:

Նույն **Պյութագորասն** աշխարհահիմքում թվեր էր տեսնում: Նրան է, ըստ երեւույթին, պատկանում երաժշտական սանդղակի թվային բազիսի հայտնագործությունը գ դրա հիման վրա ձեւավորվեց երկնային մարմինների ներդաշնակության ուսմունքը. Տիեզերքի երաժշտությունը չենք լսում նման այն բանին, որ ծովափին ապրող մարդիկ դադարում են զգալ ալեբախության աղմուկը: Ի դեպ, թվերի միստիկան ընկած էր նաեւ յուրօրինակ կրոնական պաշտամունքի հիմքում, որը պահանջում էր խիստ ծիսակարգ ու բազմաթիվ արգելանքներ:

Պյութագորասին վերագրվող հանրահայտ թեորեմը (որը, ճիշտն ասած, հայտնի է եղել շատ ավելի վաղուց) մի զարմանալի գիտելիք է փաստում. ուղղանկյուն եռանկյան ներքնաձիգի քառակուսին հավասար է էջերի քառակուսիների գումարին, մինչդեռ ցանկացած եռանկյան որեւէ կողմ միշտ ավելի կարճ է, քան մյուս երկու կողմերի երկարությունների գումարը:

Այլ կերպ ասած՝ երկու կետերը միացնող ամենակարճ հեռավորությունը այդ կետերը միացնող ուղիղ գիծն է:

